ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/10-18 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5002 գրության հիման վրա, 29.12.2017թ. թիվ 03/26-3/10-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն 23.01.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

04.08.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N «ԲԸԱՇՁԲ-7/1-1» աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Համաձայն Պայմանագրի գնման ժամանակացույցի «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն մինչև 2017թ. նոյեմբեր ամիսը պետք է իրականացներ թվով 10 դաշտային շարժական բաղնիքների կառուցման աշխատանքներ:

Համաձայն՝ գնման ժամանակացույցի՝ թվով 5 բաղնիքներ պետք է կառուցվեր մինչև 201/թ. հոկտեմբեր ամիսը, ևս 5 բաղնիքներ պետք է կառուցվեր մինչև 2017թ. նոյեմբեր ամիսը:

Համաձայն պայմանագրի Հավելված N 1-ի՝ աշխատանքների կատարման համար ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից պետք է հատկացվեին Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգավտոմեքենաներ՝ նախատեսված դաշտային բաղնիքի պատրաստման համար:

Նույն հավելվածի համաձայն՝ վերը նշված ավտոմեքենաները պետք է հատկացվեին գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետից մեկ ամիս առաջ:

28.09.2017թ. և 30.09.2017թ. հատկացված ավտոմեքենաները պիտանի չեն եղել դաշտային շարժական բաղնիքների կառուցման համար:

Հանձնված ավտոմեքեաների վերաբերյալ կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որում նշվել են մեքենաների վրա առկա թերությունները:

«Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն 12.10.2017թ. գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին՝ հայտնելով, որ՝

1. տրամադրված մեքենաները պիտանի չեն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար,

2. մեքենաները տրամադրվել են պայմանագրով նախատեսված ժամկետից ուշ:

18.12.2017թ. «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին առաջարկելով մինչև 26.12.2017թ. լուծել պայմանագիրը, սակայն գրությունը մնացել է անպատասխան:

Ընկերությունը հայտնել է, որ 27.12.2017թ. «ԷլիտՀիլզ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ 04.08.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ի միջև կնքված N «ԲԸԱՇՁԲ-7/1-1» աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը լուծելու պահանջի մասին:

Ներկայումս թիվ ԵԱՆԴ/4676/02/17 քաղաքացիական գործը գտնվում է դատարանի վարույթում և դատական նիստը նշանակված է 02.03.2018թ.:

Պատվիրատուն 25.12.2017թ. գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ 22.12.2017թ. հիմք ընդունելով պայմանագրի 2.3.1. կետը միակողմանի լուծել է պայմանգիրը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պատվիրատուն 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5002 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, որով հայտնել է, որ 22.12.2017թ. հիմք ընդունելով պայմանագրի 2.3.1. կետը միակողմանի լուծել է պայմանգիրը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին, որով խնդրել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընկերությունը գտնում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին ներառելու համար հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի)

առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Նույն հոդվածի 2- մասի համաձայն՝ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կապալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կապալ, շինարարական կապալ, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ, պետական կարիքների համար կապալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են սույն պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքի՝ կապալի պայմանագրի համապատասխան տեսակների մասին կանոններով:

<< քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են պատվիրատուի տրամադրած նյութերի, սարքավորումների, նախագծային փաստաթղթերի կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքի ոչ պիտանի կամ անպատշաճ որակի լինելը:

Նույն օրենսգրքի 717-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալառուն իրավունք ունի աշխատանքը չսկսել, իսկ սկսած աշխատանքը դադարեցնել այն դեպքերում, երբ պատվիրատուի կողմից կապալի պայմանագրով իր պարտավորությունները խախտելը, մասնավորապես, նյութեր, սարքավորումներ, նախագծային փաստաթղթեր կամ մշակման (վերամշակման) ենթակա գույք չտրամադրելը, խոչընդոտում է պայմանագրի կատարմանը, ինչպես նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նշված պարտավորությունները չեն կարող կատարվել սահմանված ժամկետում (հոդված 367):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կապալառուն սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների առկայության դեպքում իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն չկատարելով դաշտային շարժական բաղնիքներ պատրաստելու համար անհրաժեշտ մեքենաները ժամանակին և համապատասխան վիճակում տրամադրելու պարտավորությունը պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը դարձրել է անհնարին, ինչի հետևանքով «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն գրավոր առաջարկել է լուծել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Ընկերությունը նշել է, որ սույն դրույթը կոչված է ևս մեկ անգամ ընգծելու պարտավորական իրավահարաբերություններին բնորոշ հարաբերական բնույթն, առ այն, որ սա իրավահարաբերություն է, որում յուրաքանչյուրի իրավունքին համապատասխանում է մյուս կողմի պարտականությունը և ընդհակառակը: Բացի այդ, նույն քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Ընկերությունը նշել է, որ ակնհայտ է, որ օրենսդիրն, ընդգծելով պարտավորության պատշաճ կատարման անհրաժեշտությունը, որպես դրա դրսևորման ձև՝ առաջին հերթին կարևորել է դրանց կատարումը օրենքին չհակասող պարտավորության պայմաններին համապատասխան:

Ընկերությունը հայտնել է, որ վկայակոչված հոդվածների համադրված վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ անձի կողմից ստանձնած պարտավորությունը նրա կողմից ենթակա է կատարման պայմանագրի պայմաններին համահունչ՝ հաշվի առնելով նաև այն իրողությունը, որ դրանից է կախված նաև մյուս կողմի՝ տվյալ պայմանագրից ակնկալվող իրավական և փաստական բարիքին հասնելու հնարավորությունը: Հարկ է նկատել, որ նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր կողմից կայացված մի շարք որոշումներով (3-1152-ՏԴ-2007թ.), (3-1091-ՎԴ-2007թ.), (3-1717-ՏԴ-2007թ. և այլն):

Որպես կանոն, քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտները հենց պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ակնկալիքով են կնքում համապատասխան պայմանագրեր: Ասվածի կարևորությունը հատկապես ընգծվում է հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան:

Ընկերությունը հայտնել է, որ տվյալ դեպքում կնքված պայմանագրով «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն հնրավորություն չի ունեցել միակողմ լուծել պայմանագիրը, քանի որ պայմանագրով վերջինիս նման իրավունք վերապահված չէ, այդ պատճառով վերջինս իրականացրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով իրեն վերապահված իրավունքը, այն է՝ հրաժարվել է պայմանագիրը կատարելուց և պայմանագիրը լուծելու առաջարկ է արել Պատվիրատուին:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն օգտվելով այն հանգամանքից, որ իրեն իրավունք է վերապահված միակողմանի լուծել պայմանագիրը, չարաշահել է իր այդ իրավունքը՝ լուծելով պայմանագիրը և «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար գործընթաց է սկսել՝ առանց անդրադառնալու պայմանագիրը լուծելու համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքներին:

Պայմանագիրը լուծելու մասին գրության մեջ Պատվիրատուն նշել է միայն պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը, որի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե խախտվել է Աշխատանքի ժամկետը:

Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում սույն կետը չի կարող կիրառվել «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ի նկատմամբ, քանի որ Պատվիրատուն չի կատարել համապատասխան սարքավորումները ժամանակին հանձնելու իր պարտականությունը և նման պայմաններում փորձում է պայմանագրի չկատարման փաստը ներկայացնել «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ի կողմից աշխատանքների ժամանակին չկատարմամբ ինչը չի համապատասխանում իրականությանը:

Մինչդեռ այս պարագայում, Պատվիրատուն չկատարելով մեքենաներ հանձնելու իր պարտավորությունը հանգեցրել է պայմանագրի լուծման իրավական հիմքի առաջացմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլտված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Ընկերությունը նշել է, որ սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուի կողմից չի կատարվել պայմանագրի էական պայմանը, այն է՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ համապատասխան մեքենաների ժամանակին տրամադրումը, իսկ այն, որ դա էական պայման է, բխում է առաջին հերթին պայմանագրի լեգալ բնորոշումից, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 717-րդ հոդվածից:

Ընկերությունը խնդրել է, հաշվի առնելով վերոգրյալը, մերժել «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը:

«Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/01 ընթացակարգի շրջանակներում 12.01.2018թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը 12.01.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին և հայտնել է, որ 27.12.2017թ. «ԷլիտՀիլզ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ 04.08.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ի միջև կնքված N «ԲԸԱՇՁԲ-

7/1-1» աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը լուծելու պահանջի մասին և ներկայումս թիվ ԵԱՆԴ/4676/02/17 քաղաքացիական գործը գտնվում է դատարանի վարույթում և դատական նիստը նշանակված է 02.03.2018թ.:

Վերոհիշյալ գրությամբ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել վերոգրյալը և 12.01.2018թ. նշանակված նիստը հետաձգել մինչև գործով վերջնական դատական ակտի կայացումը:

«Էլիտ-Հիլզ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/01 ընթացակարգի շրջանակներում 23.01.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5002 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքված «ԲԸԱՇՁԲ-7/1-1» ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 22-ից միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 10 հատ շարժական բաղնիքների կառուցման մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/01 ընթացակարգի շրջանակներում 12.01.2018թ. ժամը 12:00-ին և 23.01.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքվել է «ԲԸԱՇՁԲ-7/1-1» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն) ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր համապատասխան և սահմանված ժամկետներով:

4. Պայմանագրին կից N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝ աշխատանքների կատարման համար նախատեսվել է հետևյալը.

աշխատանքների կատարման համար ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից շարժական դաշտային բաղնիք (հատ) ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից պետք է հատկացվեին Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգ ավտոմեքենաներ՝ նախատեսված դաշտային բաղնինքի համար, որի թափքն իրենից ներկայացնում է դռնող և պատուհաններով սարքավորված արկղանման մետաղյա ծավալուն կառույց: Թափքի ներսում դիմացի պատի մոտ տեղակայված են սառը ջրի բաքերը, բաքերը արտադրվում են 3.0-3.5 մմ հաստության AISI 430 կամ համարժեք պողպատից, որոնց կողքին գտնվում է օդամբարն իր դեդուկտորով և երկշղթայանի մոնոմետրով: Տաք ջրի բաքը արտադրվում են 3.0-3.5 մմ հաստության պողպատից՝ տեղակայվում է մուտքի պատի մոտ: Խողովակաշարով սառը և տաք ջրի բաքերը միացված են վառարանին և ցնցուղային սարքերին:

1 ժամում 300լ ջուրը մինչև 60° C տաքացնելու հզորությամբ վառարան, որը իր ծխատար խողովակի հետ միասին գտնվում է թափքից դուրս: Վառարանը արտադրվում է 5 մմ հաստության պողպատից: Վառարանը նախատեսված է չոր վառելիքով /փայտով/ շահագործելու համար:

Թափքի դրսից գտնվում է ջրառքի համար նախատեսված խողովակապտուկը, որը միացված է խողովակաշարին: Թափքը ներսի կողմից կահավորված է 3 անձի համար նախատեսված նստարաններով և առնվազն 6 կտոր հագուստի կախիչներով: 3 հատ լուսավորության համակարգ (LED) տեսակի, միացված ավտոմեքենայի էլեկտական ցանցին:

Թափքի կողային պատը եկու երկայնական մասերից: Ներքևի հատվածն ամբողջ մակերեսով ունի խորացում և սարքավորված է ջրահեռացման հարմարանքներով, իսկ վերևի մասում տեղադրված են թվով 3 ցնցուղային սարքերը: Թափքի կողային պատի եզրերից ամրացված է անջրանցիկ շերտով պատված գործվածք, սարքի աշխատանքային վիճակում լողանալու հատվածը արտաքին միջավայրից մեկուսացնելու համար, որի վրա ներսի կողմից արված է դռան դեր կատարող ծածկող բացվածք:

Հատուկ մասի ուրվագիծ-բացատրագիրը

ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգ ավտոմեքենաները հատկացվում են գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներից մեկ ամիս առաջ:

Շահագործման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի:

5. Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ 10 հատ բաղնիքների կառուցման աշխատանքների/ դաշտային շարժական բաղնիք/ կատարումը պետք է իրականացվեր 2017 թվականին ըստ ամիսների՝ հոկտեմբեր 5 հատ և նոյեմբեր 5 հատ:

6. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

7. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որում նշվել է հետևյալը.

Պատվիրատուն 28.09.2017թ. հանձնեց թվով 3 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա և 30.09.2017թ. թվով 1 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա սույն արձանագրության կազմման պահին վերը նշված ավտոմեքենաների վրա առկա են մի շարք թերություններ, որոնք խոչընդոտում են պայմանագրով նշված աշխատանքները պատշաճ կերպով կատարելու և հանձնելու համար, մասնավորապես՝

- ՊՆ7541Շ պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ձախ հատվածի ներքին մասը երկարությամբ, թափքի հետնամասի ներքևի հատվածը, ինչպես նաև թափքի աջ կողմից պատուհանի ներքի հատվածը ենթարկված է կոռոզիայի, թափքի ձախ հատվածում առկա են պատռվածքներ, նշված հատվածում բացակայում է պատուհանը, թափքի ետնամասի դռները վնասված են դրսի և ներսի կողմերից, թափքի հատակը ներսի կողմից գտնվում է քայքայված վիճակում իսկ պատերի և առաստաղի ծածկույթը պատռված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7649 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ետնամասի դռները ներսի և դրսի կողմերից վնասված են: Դռների ներքին հատվածը թափքի ձախ կողմի ներքինհատվածը, թափքի աջ կողմի ներքևի հատվածը ենթարկված է կոռոզիայի: Թափքի աջ կողմից պատուհանը վնասված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7536 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ետնամասի դռները վնասված են: Թափքի ձախ հատվածի ետնամասում, թափքի աջ հատվածում առկա են կրակահերթի հետքեր, թափքի հատակը գտնվում է քայքայված վիճակում, իսկ պատերի ծածկույթը բացակայում է, պատերը գտնվում են վնասված վիճակում, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7532 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի աջ և ձախ հատվածներում առկա են կրակահերթի տեղեր, ետնամասի դռները դրսի և ներսի կողմից գտնվում են վնասված վիճակում, թափքի ձախ հատվածի պատուհանը բացակայում է, թափքի ներսի

հատվածը քայքայված է, իսկ պատերի և առաստաղի ծածկույթը վնասված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:

• Արտաքին զննման ընթացքում պարզվեց, որ գտնվում են ոչ սարքին վիճակում և կահավորված չեն:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5002 գրությունը և կից փաստաթղթերը, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի 23.01.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Նույն հոդվածի 2- մասի համաձայն՝ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կապալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կապալ, շինարարական կապալ, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ, պետական կարիքների համար կապալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են սույն պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքի՝ կապալի պայմանագրի համապատասխան տեսակների մասին կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են պատվիրատուի տրամադրած նյութերի, սարքավորումների, նախագծային փաստաթղթերի կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքի ոչ պիտանի կամ անպատշաճ որակի լինելը:

Նույն օրենսգրքի 717-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալառուն իրավունք ունի աշխատանքը չսկսել, իսկ սկսած աշխատանքը դադարեցնել այն դեպքերում, երբ պատվիրատուի կողմից կապալի պայմանագրով իր պարտավորությունները խախտելը, մասնավորապես, նյութեր, սարքավորումներ, նախագծային փաստաթղթեր կամ մշակման (վերամշակման) ենթակա գույք չտրամադրելը, խոչընդոտում է պայմանագրի կատարմանը, ինչպես նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նշված պարտավորությունները չեն կարող կատարվել սահմանված ժամկետում (հոդված 367):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կապալառուն սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների առկայության դեպքում իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքվել է «ԲԸԱՇՁԲ-7/1-1» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն) ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

աշխատանքների կատարման համար ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից պետք է հատկացվեին Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգ ավտոմեքենաներ՝ նախատեսված դաշտային բաղնիքի համար, որի թափքն իրենից ներկայացնում է դռնով և պատուհաններով սարքավորված արկղանման մետաղյա ծավալուն կառույց: Թափքի ներսում դիմացի պատի մոտ տեղակայված են սառը ջրի բաքերը, բաքերը արտադրվում են 3.0-3.5 մմ հաստության AISI 430 կամ համարժեք պողպատից, որոնց կողքին գտնվում է օդամբարն իր դեդուկտորով և երկշղթայանի մոնոմետրով: Տաք ջրի բաքը արտադրվում են 3.0-3.5 մմ հաստության պողպատից՝ տեղակայվում է մուտքի պատի մոտ:

Խողովակաշարով սառը և տաք ջրի բաքերը միացված են վառարանին և ցնցուղային սարքերին:

1 ժամում 300լ ջուրը մինչև 60° C տաքացնելու հզորությամբ վառարան, որը իր ծխատար խողովակի հետ միասին գտնվում է թափքից դուրս: Վառարանը արտադրվում է 5 մմ հաստության պողպատից: Վառարանը նախատեսված է չոր վառելիքով /փայտով/ շահագործելու համար:

Թափքի դրսից գտնվում է ջրառքի համար նախատեսված խողովակապտուկը, որը միացված է խողովակաշարին: Թափքը ներսի կողմից կահավորված է 3 անձի համար նախատեսված նստարաններով և առնվազն 6 կտոր հագուստի կախիչներով, 3 հատ լուսավորության համակարգ (LED) տեսակի, միացված ավտոմեքենայի էլեկտական ցանցին:

Թափքի կողային պատը երկու երկայնական մասերից: Ներքևի հատվածն ամբողջ մակերեսով ունի խորացում և սարքավորված է ջրահեռացման հարմարանքներով, իսկ վերևի մասում տեղադրված են թվով 3 ցնցուղային սարքերը: Թափքի կողային պատի եզրերից ամրացված է անջրանցիկ շերտով պատված գործվածք, սարքի աշխատանքային վիճակում լողանալու հատվածը արտաքին միջավայրից մեկուսացնելու համար, որի վրա ներսի կողմից արված է դռան դեր կատարող ծածկող բացվածք:

Հատուկ մասի ուրվագիծ-բացատրագիրը

ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգ ավտոմեքենաները հատկացվում են գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներից մեկ ամիս առաջ:

Շահագործման երաշխիքային ժամկետը՝ 2 տարի:

Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ 10 հատ բաղնիքների կառուցման աշխատանքների/ դաշտային շարժական բաղնիք/ կատարումը պետք է իրականացվեր 2017 թվականին ըստ ամիսների՝ հոկտեմբեր-5 հատ և նոյեմբեր- 5 հատ:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որում նշվել է հետևյալը.

Պատվիրատուն 28.09.2017թ. հանձնեց թվով 3 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա և 30.09.2017թ. թվով 1 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա սույն արձանագրության կազմման պահին վերը նշված ավտոմեքենաների վրա առկա են մի շարք թերություններ, որոնք խոչընդոտում են պայմանագրով նշված աշխատանքները պատշաճ կերպով կատարելու և հանձնելու համար, մասնավորապես՝

- ՊՆ7541Շ պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ձախ հատվածի ներքին մասը երկարությամբ, թափքի հետնամասի ներքևի հատվածը, ինչպես նաև թափքի աջ կողմից պատուհանի ներքի հատվածը ենթարկված է կոռոզիայի, թափքի ձախ հատվածում առկա են պատռվածքներ, նշված հատվածում բացակայում է պատուհանը, թափքի ետնամասի դռները վնասված են դրսի և ներսի կողմերից, թափքի հատակը ներսի կողմից գտնվում է քայքայված վիճակում իսկ պատերի և առաստաղի ծածկույթը պատռված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7649 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ետնամասի դռները ներսի և դրսի կողմերից վնասված են: Դռների ներքին հատվածը թափքի ձախ կողմի ներքինհատվածը, թափքի աջ կողմի ներքևի հատվածը ենթարկված է կոռոզիայի: Թափքի աջ կողմից պատուհանը վնասված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7536 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի ետնամասի դռները վնասված են: Թափքի ձախ հատվածի ետնամասում, թափքի աջ հատվածում առկա են կրակահերթի հետքեր, թափքի հատակը գտնվում է քայքայված վիճակում, իսկ պատերի ծածկույթը բացակայում է, պատերը գտնվում են վնասված վիճակում, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:
- ՊՆ7532 պետհամարանիշի ավտոմեքենայի թափքի աջ և ձախ հատվածներում առկա են կրակահերթի տեղեր, ետնամասի դռները դրսի և ներսի կողմից գտնվում են

վնասված վիճակում, թափքի ձախ հատվածի պատուհանը բացակայում է, թափքի ներսի հատվածը քայքայված է, իսկ պատերի և առաստաղի ծածկույթը վնասված է, բացակայում է պահեստային անվադողը և մարտկոցը:

- Արտաքին զննման ընթացքում պարզվեց, որ գտնվում են ոչ սարքին վիճակում և կահավորված չեն:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն 12.10.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև կնքված 04.08.2017թ. «ԲԸԱՇՁԲ/1-1» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն 2017 թվականի հոկտեմբեր (5 հատ) և նոյեմբեր (5 հատ) ամիսներին պետք է կատարեր շարժական բաղնիքների կառուցման աշխատանքներ թվով 10 հատ, որի մեկ միավորի արժեքը կազմում է 2372880 ՀՀ դրամ: Համաձայն կնքված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից պետք է հատկացված լինեին Զիլ 131, կամազ կամ ուրալ մակնիշի մեքենաներ, նախատեսված դաշտային բաղնիքի համար, որի թափքը իրենից ներկայացնում է սարքավորված արկղանման մետաղյա ծավալուն կառույց: Մինչ օրս տրամադրվել է 4 հատ Զիլ 131 մեքենա, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ տրամադրված ավտոմեքենաների թափքերի դռների ստորին հատվածները, թափքերի կողային մասերը երկարությամբ, թափքերի հետնամասի ներքին հատվածները ենթարկված են կոռոզիայի (որը պետք է փոխարինվի նորով), թափքերի ձախ հատվածներում առկա են պատռվածքներ, ինչպես նաև բացակայում են մեքենաների պատուհանները, թափքերի ետնամասի դռները վնասված են ներսի և դրսի կողմից: Թափքերի ներսի մասը գտնվում է քայքայված վիճակում, իսկ պատերի և առաստաղների ծածկույթները պատրտված են, ինչպես նաև հատակները:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Պատվիրատուին տեղեկացրել է, որ տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից վերոնշյալ կունգ ավտոմեքենաները հատկացվում են գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներից մեկ ամիս առաջ, որը չի կատարվել: 3 միավոր Զիլ տրամադրվել է 29.09.2017թ.-ին, իսկ 1 միավոր Զիլ 131 տրամադրվել է 30.09.2017թ.-ին:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին նշված ավտոմեքենաները փոխարինել և տրամադրել պայմանագրով սահմանված սարքավորված վիճակում գտնվող մեքենաներ և մինչև տրամադրելը տեղեկացնել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին, որպեսզի Ընկերության համապատասխան մասնագետները տեղում ծանոթանան մեքենաների վիճակին:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն 18.12.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության կողմից համապատասխան կունգերի չտրամադրման արդյունքում «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն զրկվել է պայամանագրով ստանձնած պարտավորության կատարման հնարավորությունից և առաջարկել է Պատվիրատուին սույն գրությունը ստանալուց հետո մինչև 26.12.2017թ. լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուն 25.12.2017թ. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին ուղղված թիվ ԴՎԱ/4833 գրությամբ հայտնել է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով նախատեսված բաղնիքների կառուցման աշխատանքների ժամկետները, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 22-ին միակողմանի լուծել է 04.08.2017թ. կնքված Պայամանագիրը՝ 10 հատ դաշտային շարժական բաղնիքների կառուցման աշխատանքների մասով:

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ***կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են պատվիրատուի տրամադրած նյութերի, սարքավորումների, նախագծային փաստաթղթերի կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքի ոչ պիտանի կամ անպատշաճ որակի լինելը:***

Նույն օրենսգրքի 717-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***կապալառուն իրավունք ունի աշխատանքը չսկսել***, իսկ սկսած աշխատանքը դադարեցնել այն դեպքերում, ***<u>երբ պատվիրատուի կողմից կապալի պայմանագրով իր պարտավորությունները խախտելը</u>, մասնավորապես, նյութեր, սարքավորումներ, նախագծային փաստաթղթեր կամ մշակման (վերամշակման) ենթակա գույք չտրամադրելը, <u>խոչընդոտում է</u>***

պայմանագրի կատարմանը, ինչպես նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նշված պարտավորությունները չեն կարող կատարվել սահմանված ժամկետում (հոդված 367):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կապալառուն սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների առկայության դեպքում իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով:

Այսպիսով, ***Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ 10 հատ բաղնիքների կառուցման աշխատանքների*** /դաշտային շարժական բաղնիք/ ***կատարումը պետք է իրականացվեր 2017 թվականին*** ըստ ամիսների՝ ***հոկտեմբեր-5 հատ և նոյեմբեր- 5 հատ:***

Պայմանագրին կից N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության կողմից «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին պետք է հատկացվեին տեխնիկական բնութագրին համապատասխան Զիլ-131, Կամազ կամ Ուրալ մակնիշի կունգ ավտոմեքենաներ՝ գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներից մեկ ամիս առաջ:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի միջև կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որտեղ նշվել է, որ Պատվիրատուն 28.09.2017թ. հանձնեց թվով 3 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա և 30.09.2017թ. թվով 1 հատ Զիլ 131 կունգ ավտոմեքենա, սակայն սույն արձանագրության կազմման պահին վերը նշված ավտոմեքենաների վրա առկա են մի շարք թերություններ, որոնք խոչընդոտում են պայմանագրով նշված աշխատանքները պատշաճ կերպով կատարելու և հանձնելու համար:

Այսպիսով գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուն չկատարելով դաշտային շարժական բաղնիքներ պատրաստելու համար անհրաժեշտ մեքենաները ժամանակին և համապատասխան վիճակում տրամադրելու իր Պայմանագրային պարտավորությունները՝ Պայմանագրով նախատեսված

աշխատանքների հետագա կատարումը «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից դարձրել է անհնարին և փաստացի զրկել է Ընկերությանը Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/10-18 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04421922) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ